# «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1**. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «կամ համայնքային» բառերը:

**Հոդված 2**. Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասում «(աշխատակազմի ղեկավարը)» բառերից հետո լրացնել «կամ աշխատակազմի քարտուղարը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, իսկ համայնքային ծառայության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից» բառերը:

**Հոդված 4**. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «Հաստիքների առավելագույն քանակը» բառերից առաջ լրացնել «Պետական իշխանության մարմիններում» բառերը.

2) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պետական ծառայության պաշտոնների անձնագրեր կազմելու և անվանացանկ վարելու մեթոդաբանությունը հաստատում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:»:

**Հոդված 5.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «աշխատակազմի ղեկավարը» բառերից հետո լրացնել «(աշխատակազմի քարտուղարը)» բառերը:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: